Այս աշխատասիրութենէն ետքը որ հոգեւոր կեանքի ամենէն ապահով ճամբան ցոյց կու տայ մեզի, միտքը դրաւ առաջնական պէս դէպի Պաղեստին ճամբորդութիւն մը ընել, ուստի ուզեց Պարչեղնայէն նաւ մտնել: Աստուած՝ հրաշքով ետ կեցուց զանիկայ մօտեւել պղտիկ նաւ մը որ նոյն նաւահանգիստին դիմացը ծովասոյզ եղաւ: Այն տուն հիւրընկալութեամբ բարեպաշտ Իզապէլլա անունով տիկնոջ մը կողմէ, որ օր մը իր քարոզը լսած էր և իր դէմքը պայծառացած տեսեր էր: Յետոյ մտաւ խոշոր նաւ մը և Կոյէտա գնաց ու տնկէ Հռոմի ճամբան բռնեց, մինակ, հետիոտն, ծով բռնելով և մօտաւորով ըստ իր սովորութեան Հոն Ադրիանոս Դ. Բահանայապետին օրհնութիւնը ընդունեցաւ: աղքատներուն բաշխեց այն դրամը զոր մի քանի սպանիացիներ ստիպմամբ տուած էին իրեն սուրբ երկրին այցելութեան համար, և այցելեց Պատուան և Վէնետիկը: Միշտ կը մտերար իր հացը, և քաղաքներուն սալայատակին վերայ կը պառկէր: Զուր տեղ Մարկոս—Անտոնիոս Թրէվիզան, Վենետիկի ծերակուտականը, ուղեց զանիկայ հիւրընկալել, վաճառար ջանացին զինքը համոզել որ ետ կենայ ուխտաքննութենէ մը որ այն տարին շատ վտանգաւոր էր: Մեր Սուրբը արիւարար մեկնեցաւ, մտած նաւուն մէջ գտնուողներուն Սուրբ Աւետարանը քարոզեց. նաւարկեց դէպի Պաղեստին և վերջապէս 1523 Սեպտեմբեր 4ին Երուսաղէմ հասաւ՝ Վենետիկէն ելլելուն քառասներորդ օրը:

Զիթենեաց լեռը այցելած պահուն՝ Յիսուս Քրիստոս անոր երեւցաւ օգին մէջէն և հաճեցաւ անոր առաջնորդել: Իգնատիոս երբ իր քերականութեան գոհացում տուաւ, Երուսաղէմէն մեկնեցաւ ձեռնառն, սրունքներն ու ոտքերը մերկ, և շատ գէշ հագուած: Քիչ մը հանգիստ ըրաւ Կիպրոս, ապա ձենով և վերջապէս շատ մը անցուդարձերէ յետոյ հասաւ Պարչեղնա ուսկից մեկնած էր:

Այս մեծ Սուրբը, այն միջոցին, երեսուններեք տարեկան էր: Բայց ընկերոջ օգնելու փափագէն մըղուած որոշեց ուսմունք ընել, որպէս զի մարդկային գիտութեանց ծանօթանալով կարենայ միացնել Ս. Հոգւոյն օծութեան, որով լեցուած էր, իմաստասիրութեան, աստուածաբանութեան և Սուրբ Գրոց գիտութիւնը:

Իգնատիոս երկու տարի երկրորդական ուսումնեքը սորվելէ յետոյ Ալքալայի համալսարանը գնաց աւելի բարձր գիտութիւններու պարապելու համար: Իր հետը Ալքալա տարաւ երեք ընկեր որոնք ուզեցին բարի գործերու մէջ իրենց աջակից ըլլալ: Ալքալայի մէջ շահեցաւ ուրիշ չորրորդ ֆրանսացի ընկեր մէն ալ զոր Աստուած միեւնոյն եռանդով լեցուց: Իր գիտասոր գրադուծն եղաւ քրիստոնէական վարդապետութիւն սորվեցնել տղոց և տգէտներու: Անկենտոյց կը բնակէր, իր կերակուրը կը մտերար, իր

ընկերներուն պէս մոխրագոյն բուրդէ երկայն պարեգօտ մը կը հագնէր, միշտ բոկոսն կը քալէր և իրեն գործ ըրած էր աղքատներուն օգնել և անոնց համար ողորմութիւն ժողվել: Մեղաւորներու դարձին համար ալ կ'աշխատէր. և իր յանդիմանութիւնները այնքան սզողու էին որ քիչ ատենուան մէջ Ալքալայի ամբողջ երիտասարդութիւնը ուղղութեան բերաւ: Բայց շատ չանցած Յիսուսի Քրիստոսի համար սկսաւ հաւածուիլ: Ամբաստանեցին զինքը իբրեւ նորասէր, մոլորեալ, հերետիկոս, բանտը դրին և հոն պահեցին քառասուններկու օր, որ միջոցին բնաւ չուզեց որ իր սրբութեան և քարոզատութեան վրայ հիացող մեծանուն անձեր ազատեն զինքը իրենց միջնորդութեամբ: Բայց վերջապէս դատաւորները ճանչնալով իր անմեղութիւնը և տեսնելով որ աւետարանին ամենափոքր սկզբունքներուն համեմատ Յիսուսը քարոզելու ուրիշ յանցանք չէ գործած, ազատ արձակեցին զինք և հրապարակաւ հաստատեցին իր անաքինութիւնը և իր բարքին ու վարդապետութեան անարատութիւնը:

Թողեացի արքեպիսկոպոսը խորհուրդ տուաւ անոր որ իր ուսումը աւարտելու համար երթայ Սալամանքա, որուն համալսարանը աշխարհիս ամենէն նշանաւորներէն մին էր: Իգնատիոս իր ընկերներով հոն գնաց և այնտեղ Ալքալայի մէջ ըրած բարիքները շարունակեց և քիչ ժամանակի մէջ շատ մարդիկ շահեցնաւ Աստուծոյ: Բայց հոն ալ եկեղեցական նշոյն հաւածանքներուն, այսինքն զրպարտութեան, նախատինքի, բանտի և չղթայի: Բայց Յիսուս միշտ փրկեց զանիկայ և փառաւորեց: Իգնատիոս տեսնելով որ Սալամանքայի մէջ այնչափ յառաջ չ'երթար ուսման մէջ, և իրեն թոյլ չեն տար որ ուզածին պէս ընկերոջ հոգւոյն փրկութեան համար աշխատի, որոշեց Աստուծոյ ներշնչութիւնը, երթալ Բարիք քաղաքը, ուր բազմաթիւ օտարականներ կը դիմէին նոյն միջոցին ուսում սորվելու համար:

ՎԵՑՈՐԵԱՅ ԱՐԱՐՁՈՒԹԻՒՆԸ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Ատենով, Փարաւոններու հետաւոր օրով, մարդ մը կար որ Սգիպտացեոց Իպրոցին մէջ գիտութիւն սորված էր: Այս մարդուն առնունը Մովսէս էր: Այս զրե հաճուած տղան, նոյն ազգին քուրմներուն, աշխարհիս առաջին գիտուններուն քով կրթուելով, անչուշտ, իր ուսուցիչներուն պէս, ամենահմուտ աստղագէտներէն մին եղաւ: Բայց այն դարուն՝ երկրագիտութիւնը տակաւին ծնած չէր, ոչ ոք ձեռնարկած էր պեղել երկրի ալճերը, անոնց գաղտնիքները յափշտակելու համար:

և ասոր հակառակ օրին մէկը՝ Մովսէս կ'ելլէ լայն գիծերով ներկայացնելու աշխարհի ըստեղծման պատկերը, երկինքի պատմութիւնը՝ մեր մոյրակինէն առաջ, երկրագունդին յեղաշրջումները և կենսաւոր էակներու փոփոխումները՝ մարդկութեան երեւումէն առաջ անցած երկար շրջաններու միջոցին:

Ահա Մովսէսին խօսքերը. Սկիզբը՝ Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց. . . Աստուած ըսաւ. յո՛յս ըլլայ, եւ յոյսը եղաւ. գիշեր եւ ցօրեկ սեղի ունեցան, եւ ա՛ս եղաւ առաջին օրը:

Այնուհետեւ գիտուններու սերունդներ կեանք մաշեցին, աչքի լոյս սպառեցին Սուրբ Գիրքին բնագրին վրայ. Լո՛յսը արեւէն առաջ. Կամ Մովսէս մոլորած է կամ բանաստեղծական աղուոր կեղծիք մը երեւակայած է:

Բայց ժամանակը կը հեգնէ ենթադրութիւնները. և ահա՛ արդի գիտութիւնը կը սկսի քողին մէկ կողմը վեր առնուլ. աշխարհի տրուած ուժն է առաջին շարժման մէջ դըրուած նիւթական գոյացութիւնը, եթերը կամ էլեքտրականութիւնը որ ամէն ձեւ կ'առնու, որովհետեւ, սկիզբը, կ'ըսէ Մովսէս, խաւարը կը ծածկէր անդունդը, նիւթը անկերպարան էր եւ դասարկ, ասիկայ գիշեր էր, երեկոյ, և լուսատու թրթռումը կը սկսի տիեզերքը կերպարանափոխել, կը կազմէ հիւլէները որ անդունդէն կ'ելլեն և յառաջ կը բերեն ծնող իրերու արշալոյսը, աշխարհիս վրայ ծագող առաջին առաւօթը:

Եւ Աստուած ըսաւ. Թող անջրպետութիւն իրարմէ ջուրերը, այսինքն այս նիւթեղէն հոսանուսները, եւ Աստուած այս անջրպետը երկինքն անուանեց: Իրօք, արդէն, եթերական թրթռումը կ'անջատէ այն ժամանակ ընդարձակ միգամածները, որոնցմէ ապա պիտի ելլեն հաստատութեան աստղերը. այս է երկրորդ օրուան գործը:

Յետոյ երկիրը երեւան կու գայ. սկիզբը՝ համակ հրաշող գունդ մըն է, կամաց կամաց կը պաղի. մակերեւոյթը կեղեւով կը ծածկուի և, ինչպէս որ Ծննդոց Գիրքը մեզի ցոյց կու տայ, ջուրերուն ծոցէն դուրս կ'ելլեն երկրամասերը (ցամաքը). Եւ Աստուած

ըսաւ. Թող երկիրը արտադրէ իրենց սեռին համեմատ սերմ կրող բոյսեր եւ ծառեր: Եւ արդի բնախօսութիւնը Սուրբ Գիրքին այս խօսքը հաստատելէ ուրիշ բան չի կրնար ըսել. կենդանական կեանքէն առաջ եղած է բուսական կեանքը, առանց որու ուէ կենդանի չի կրնար ապրիլ. Մանրէներ, մամուռներ, քարաքոսներ երկիրը կը բռնեն, դեռ ևս եղկ ցամաքները կը ծածկուին ահագին անտառներով. հսկայ պտերներ, վիթխարի սունկեր, երեսուն մէդր բարձր տիտան ձթաղիներ, անհեթեթ անճոռնի արաւկարիաներ և կոկոռներ, մէկ խօսքով, նախնական ժամանակներու ամբողջ բուսականութիւնը, ինչպէս որ կը հաստատէ Մովսէս արարչութեան երրորդ օրուան մէջ:

Բայց քողը անթափանց մթնոլորտին, վեհաշուք յեղաշրջումներու թատրին, վերջապէս կը պատռի. արեւը կ'երեւի. Արեւը, այն հեռաւոր դարերուն մէջ դեռ ևս անկազմ աստղ մը, ըստ արդի տիեզերախօսութեան — Լաբլասի խաբըր թող չմնայ — մոլորակներէն շատ վերջը ծնած է: Լուսածնային ճառագայթներ կը պայծառացնեն չորրորդ օրը և երկրային գիշերներու ատեն, մեծ բացատներու մէջէն կ'ելլէ լուսնի նարնջաթոյր լոյսը, և երեւան կու գայ աստղերու զոդող շողունը. Այս շրջանէն սկսեալ կենդանական կեանքը կ'աճի դեռ ևս սաք ջուրերուն մէջ. Աստուած կը ստեղծէ ջրային մեծ կենդանիները, վիթխարի սողունները և երկնից թռչունները. քսան մէդր երկայն մողեղակերպներ, ձկնամողէզներ, պրսնտամողէզներ, լէւլաքներ, մաշկամատներ, ամէնքն ալ յայտնութեան կենդանիներ, որոնց արտակարգ ձեւերը առջեւնիս կը պարզէ երկրաբանութիւնը:

Երկիրը այս միջոցին կը պաղի, եղանակները կ'երեւին. այնպէս որ հինգերորդ օրը յարմար կ'ըլլայ մեղի ծանօթ կենդանիներու կերպարանքին աւելի մօտ էտկներու բնակութեան. ասիկայ երրորդական շրջանն է որ մերիննէն անմիջապէս առաջ է. Բիշքի տեսակները կը ճշդուն կը հաստատուին. անտառներուն մէջ կը բարձրանան

կաղնիներ, թզենիներ, դղբիներ. սէզի մարգերուն մէջ կը խայտան ձիու իրանով, մօրակինճի գլխով հնազաղաններ, վիթանման, սլացիկ մարմնով թրագաղաններ:

Մեծ անտառներու սիզաստաններուն մէջ կը սուրան յամայներ և անալուծներ, յետոյ կարգը կու գայ պակաթանիներու, որ մեր փղղերը կը յիշեցնեն, ձիակերպներու որ գրեթէ մեր ձիերուն նման են, խոշոր կապիկներու որ այն վաղեմի ժամանակներէն ի վեր բնաւ չեն փոխուած:

Աստուած ըսած էր. Թող երկիրը հանգ օնչաւոր եակներ ըստ իրենց տեսակին, ընտանի կենդանիները, սողունները եւ երկրի գազանները ըստ իրենց տեսակին: Եւ այնպէս եղաւ:

Եւ հնախօսութիւնը մեր առջեւ կը դնէ Ենովայի գործին այս անցած կամ կենդանի հաւաստիքները՝ Արարչութեան վեցերորդ շրջանին ընթացքին մէջ:

Եւ Աստուած, կ'ըսէ Ս. Գիրքը, տեսաւ որ բարի է այս, բայց վեցերորդ օրը լինցած չէր. Այս ամբողջ անբանաւոր բնութեան կը պակսէր գլուխ մը երկրի եւ ծովու զօրութեանց վրայ իջեցնու համար, եւ Աստուած ըսաւ. ստեղծեմ մարդը ըստ մեր պատկերին եւ նմանութեան: Եւ զմեզ անասուններէն բաժնող վիշը լաւ ևս ցոյց տալու համար Մովսէս խօսքը կը ճշգէ. Եւ Աստուած մարդը ստեղծեց ըստ իր պատկերին, ստեղծեց զայն ըստ Աստուծոյ պատկերին:

Այսպէս կը վերջանայ պատմութիւնը այս ամենէն աւագ դիւցազներգութեան, որուն յայտնի է թէ, Մովսէս լոկ մեծ գիծերը կ'ուզէր ներկայացնել:

Արդ ձեզի կը հարցնեմ, ձեզի որ աչքէ անցուցած էք սրբազան բնագիրը և ուսումնասիրած էք երկրախօսութիւնը, Մովսէս ինչպէս կրցած է գիտնալ ինչ որ մեզի կը սորվեցնէ. Ինչպէս կրցաւ մեր առջեւ դնել Աստուծոյ գործերուն շարքը. Ինչպէս կրցաւ գիտնալ թէ արեւը չորրորդ օրը կազմուած է. թէ բոյսերը կենդանիներէն առաջ եղած են. թէ մեր հիմակուան տեսած կենդանեաց տեսակները ստեղծելէ առաջ Աստուած ծո-

վերը խոշոր գազաններով լեցուցած է. թէ սողունները և թռչունները ստնաւորներէն առաջ կազմեր է, և այս՝ մարդուս ստեղծումը կանխող միլիոնաւոր տարիներու ընթացքին մէջ:

Երբ մէկը մօտէն կամ հեռուէն երկրաբանութեան, բնախօսութեան, աստղաբանութեան հետ կապ ունեցող բոլոր գիտութիւնները ուսանելէ յետոյ, առանց նախապաշարուծի՝ Մենդոց առաջին գլուխը կարգայ, կ'ապշի կը մնայ նկատելով որ մարդ մը, Փարաւոններու օրով, կրցած է այսպէս կանխաւ համարել մեր արդի գիտութեան եզրակացութիւններուն, արդիւնք հանճարին Նեւտոններու, Մաքսուէլներու, Քիւլիներու, էլի տը Պոմոններու, Ֆայերու և Սիւէսնեբու:

Այո՛, տարակոյս չկայ, Մովսէսի գիտութիւնը իր ժամանակակից գիտուններու հըմտութիւններէն հազար կանգնաչափ գերիվերոյ է, միանգամայն կը կազմէ անհաւատալի գուշակութիւն մը մեր արդի գիտութեան և փորձառական զննութիւններուն միջոցով երեւան հանուած ամենէն սողոյգ և ամենէն հաւաստի իրողութեանց. և որչափ յառաջանա՞ք այնչափ աւելի կը թափանցենք Մենդոց Գիրքին ստոյգ իմաստին:

Եւ այս կը հաստատէ սա խօսքերը Ալպէր տը Լաբարանի, որ արդի ամէն գիտուններէն աւելի՝ ժամանակակից հնէաբանութեան և երկրախօսութեան վերաբերեալ գիտութիւնները միանգամայն ուսումնասիրած է:

«Եթէ պետք ըլլար քառասուն տողի մէջ ամփոփել երկրախօսութեան ամենէն հաւաստի ծանօթութիւնները, կ'օրինակէի Մենդոց բնագիրը, այսինքն աշխարհիս ստեղծման պատմութիւնը՝ ճիշդ Մովսէսի գրածին պէս»:

Ա. Թ. ՄՕՐԷՕ

Զմամուէն կ'ընդունինք հետեւեալը.

Զմամու 29 Յունիս 1914

ՆԱԽԱՆՁԵԼԻ ՃՇՄԱՐԻՏ ԴԱՐՁ ՄԸ

Մերտիկու վիճակին հայ կաթողիկէներէն խանութեան Յովնանէս՝ որ թուէս պրեթէ հինգ տարի առաջ չար թելադրութեամբ պատահած թեմական շփոթութեանց և վիճակաւորին դէմ յարուցուած խռովութեանց պարագլուխներէն՝ և կաթողիկէ անարատ թեմին մէջ՝ հերձուած մուծանել ուղղունբուն գլխաւորներէն մին էր, և էջմիածնական քահանայ բերելու զիսմամբ անձամբ Տիգրանակերտ գնացած էր և երկու ամիսի չափ՝ հերձուածող քահանան տունը պահած էր, որտի եւ խղճի խայթերէն եւ տագնապներէն անդադար տանջուած՝ իր անդրանիկ որդին եւ ունեցած բարեկեցիկ վիճակը կորսնցնելէ յետոյ՝ ձախող բախտի, խեղճութեան եւ թշուառութեան մատնուելով՝ կը սթափի վերջապէս եւ կ'ուշաբերի եւ ճշմարիտ դարձի կու գայ, Լաւ համոզուելով որ գլխէն անցած այս ամէն պատահարները՝ մեղաց արդիւնք եւ պատիժ են, բաւական չի համարիր ժամանակին՝ յետս կոչում ընել եւ ըրած յանցանքը ու տուած գայթակղութիւնները ու չար օրինակը Արհ. Մալոյեան Արքեպիսկոպոսին առջեւ հրապարակաւ խոստովանիլ. այլ այս տարի Յունիս 28ին Դամասկոսէն՝ ուր երկու տարի առաջ գործ գտնելու պատճառաւ գնացած էր՝ Զմամու կու գայ եւ Արհ. Կիւլեան Արքեպիսկոպոսին ոտքը կ'իյնայ եւ արտասուլաթոր աչքերով անկէ թողութիւն կը խնդրէ, անոր նուիրական անձին եւ արժանապատուութեան դէմ ըրած նախընթաց դատապարտելի արարքներուն համար. Արհ. Յուսիկ Արքեպիսկոպոսը զթառատ սիրով եւ սրտով ընդունեց զինքը, ոտք հանեց, քաջալերեց եւ իրեն որտանց ներելէն զատ՝ լիաձեռն պարգեւով արձակեց, որով խեղճը միաթարուած սրտով եւ հոգեւով եւ խղճին խայթերէն ալ ազատուած, երկրորդ օրը ուրախութեամբ մեկնեցաւ:

Արդ կը խնդրուի որ ուրիշներու ուղղութեան համար՝ հաճի կար. Արձագանգի իւրմբադրութիւնը հրատարակել այս դէպքը:

ԱՆՏՈՆ Վ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

ԻՆՍԱՆԻ՞ ՄԻ ԵՕԳՍԱ ԱԼԼԱԶԱՆԻ՞ ՄԻ

(Տեկամի)

Կիւնլէր կէչտի վէ Զատիկ եապլաշտը...

Աւագ Զորեքչարթի ագչամ բէյիս եազըլխանէտէն էվինէ ալտէթ իթտիյնտէ, պէսլէմէ օնա բէք զարիպ պիր խապէր վէրիր.

— Էֆէնտի, պիր վարդապետ կէլիպ սիզի արատը:

— Պիր վարդապետ մի, պէն հիչ պիր բարազ թանըմամ քի...

— Միւսթագիլ պիր կէօրմէք իսթէյօր, սաաթ սէքիզտէ թէքբար կէլէճէք...

Բէյիս պու խապէրէ զայէթ սըզըլարագ սուֆրայա կէթիրիւմիչ օլան թալուզ գըզարթմասընը զայէթ իշթահորզճա եէր:

Ագլը պաշընտա տէյիլ տիր:

— Պու մայէթիմ թարաֆընտան թէրթիպ իտիւմիչ պիր օյուռ տըր... վայ խային վայ Պանա կէլիյօր քի, պու բարազը՝ պէնի խոստովանանքա տալէթ իթմէք իւզրէ եօլլամըչ օլմալը տըր... Եօգ, պու օլամազ, խայըր, պէն գաթիէն խոստովանանք օլմայը իսթէմէմ... Բէնտիմի ասարըմ պու տուզաղա տիւշմէմ... Բաթըրի'ն...

— Էֆէնտիմ:

— Պուրատան չօգ ուզապլաշմա... չայէտ պու վարդապետ պէնի թահիզ իտէճէք օլուրսա, պէն զիլի չալարըմ, հէման կէլիրսին օնը սիշարը գօվմայա պանա եարտըմ իտէրսին:

— Աման էֆէնտի, բարազլար ատամ եէմէզլէր տէյէ պիլիյօրըմ:

— Էլպէթ պիր պիլտիլիմ վար տըր. սէն պէնի տիյնէ. անլայօրմըն:

— Բէք էյի, էֆէնտիմ:

Բիյիս քէնտի քէնտինէ:

— Պէլքի պու օյուռտա պէսլէմէնին տէրարմաղը վար տըր... վայ քէրազէլէր... Լաքին շիմտի անլայաճաղարտըլար գարչըլարընտաքիլին քի'մ օլտուղընը...

Պիր արալըգ պիր վազէթա օգուլմաք իսթէտի, ֆագաթ ագլը պաշընտա օլմատըղընտան, օգուտըղընտան հիչ պիր շէյ անլամայօրտը... պիրտէն պիրէ զիլ չալընտը, սաաթ թամս սէքիզ իտի:

Ուզուէն պոյլու պիր բարազ իչէրի կիրտի վէ թէրպիյէլի պիր թավը իլէ .

— Այլաւար խայր օլսուն , էֆէնտի , տէտի :

— Խայրըլը ապչամար օլսուն :

— Կէլաիմ քի . . .

— Կէլէսինիզ տէյէ պէն սիզէ բէճա իթմէտիմ :

— Պիլիյօրում , ֆազաթ վաղիֆէմ իգթիզասնճա իչպու միւլապաթա մէճպուրում :

— Վաղիֆէնիզ իգթիզասնճա՞ մը . . . Ծիմտի պուլտուգ . . . Պանա պապրն , շայէտ պէնի խոստովանանք իթմէք իչուն կէլմիշ իսէնիզ , չէքիլիպ կիտինիզ . . .

Ձաթէն մէմուր էլէքթրիք տիւլմէսինէ պասմազ իւզրէ այաղա գալգալըտը :

— Էֆէնտի , տուրընը , տէր բարազ , մէմուրըն գօլունտան թութարազ :

— Նէ՛ տիր , պանա թէարրուզ իթմէք մի իսթէյօրսընըզ . եօ՛գ , պունա տայանըլմազ . . . բրօթէսթօ իտէրիմ :

— Գաթիէն , զիյարէթիմին մագսատը խոստովանանք տէյիլ տիր . . . պիր տաղիգա միւսաատէ պուլուրն , վէ զիյարէթիմտէն մէմուն օլուրսունուզ :

— Բէք զանն իտէմէյօրում :

Իքիսի տէ օթուրտըլար վէ վարդապետ էֆէնտիյէ խիթապէն ,

— Խաթընըզա կէլիյօր մը , պունտան ալթը սէնէ ազաէմ էվիսիզէ պիր խըրսըզ կիրմիշտի , վէ ծնուն քիմ օլտուղընը պուլաւա տընըզ :

— Էվվէթ , զանն իտէրտէմ պին ֆրանքըմը չալմըչլարտը :

— Իշթէ . էֆէնտի , պու կիւն օ պին ֆրանքը սիզէ կէթիրիյօրում :

— Հը՞ . . . Նէ՞ տէրսինիզ . . .

— Օ պին ֆրանքը կէթիրմիշիմ իշթէ , տէր , վէ պիր զարֆ ուզատըր :

Բէյիս ալթիւսթ վէ միւթէէսիր օլարապ :

Պունը պանա քիմ կէճուտէրիյօր :

— Խըրսըզ պիզաթ քէնտիսի :

— Տէմէք օլույօր քի խըրսըզ զապըթա թարաֆընտան տէրտէսթ օլընմը տըր :

— Խայրը , պու խուսուստա բէք ածիզ

օլան բօլիսլէր թարաֆընտան տէյիլ , իլլա ձէնապը Հագգ թարաֆընտան թութուլմը տըր : Խըրսըզ խոստովանանքա կէլմիշ տիր . շու հալտէ կա չալտըղընը իատէ իթմէք վէ եախօտ Ալլահըն բանմէթ ու մաղֆէրէթինտէն մահրում գալմազ մէճպուրիյէթինտէ պուլընմը տըր :

— Եա՛ . . .

Բէյիս միւթէրէտտիտ պիր հալտէ վէ բէքէլէյէրէք ,

— Բէք էյի , վարդապետ էֆէնտի , սիզէ Նէ՞ գատար վէրիլմէլի :

— Գաթիէն հիչ պիր վէրէճէյինիզ եօտ տըր . . . եալընըզ պիր տուա իսթէրիմ :

— Տէմէք գօմիսիօն ալմազ իսթէմէյօրմըսընըզ :

Վարդապետ էլլէրինի կէօյլէրէ տօղրու գալտըրարազ ,

— Ալլահ պիզէ ճէզա վէրիր , տէր :

— Սիզէ թէաճճիւպ իտիյօրում . . . տօղրուսը պունա ինանաճաղըմ կէլմէյօր . . . պէն զանն իտէրտիմ քի , խոստովանանք սիզին իչին պէօյիւք պիր թիճարլթ գաբուսը տըր :

— Էվվէթ հագգընըզ վար տըր . . . զաթէն պու կիւն տէ թէմին իթտիլի թիճարլթ սիզի մէմուն իթմէք թիճարլթի տիր . . .

— Պու բարայը պէնտէն սըրգաթ իտէնի անլայապիլիւրմիյիմ :

— Գապիլ տէյիլ տիր . զաթէն պէն տէ պիլմէմ . պէն ծնա իտմինի սօրմամըլմ :

— Հայրէթտէ գալըյօրում . շու հալտէ պիր քիմսէ չալտըղընը իատէ իթմէտիքճէ արձակում վէրմէգմիսինիզ :

— Վէրսէք տէ հիւքմիւ օլմազ . . . արձակումը վէրէն պիլիլ , ֆապաթ աֆվ իտէն Ալլահ տըր . . . ծնուն շէրաաթընտան գաչմազ գապիլ տէյիլ տիր . . .

— Պէն զանն իտէրտիմ քի հէր խոստովանանքա կէլէնէ պիր եօլ իլէ պիր արձակում վէրիլիւր . . . պու սէպէպտէն տէ քէնտի քէնտիմէ տէր իտիմ քի արձակումըն պու գատար ուճուղըղը , նամուսըղըղըն չօղալմաքնա սէպէպ տիր . . . Հալպու քի , աֆլըղըն պաղը քէրրէ տէ աղըրա մալ օլտուղընը անլայօրում շիմտի . . .

Բէյիս պունը տէտիյի վազըթ պին ֆրանգ-
լը պանքնօթը կէօթէրիօրտը:

Վարդապետ պիր մուխաթապընա:

— Էֆէնտի կէօրիւօրտընը քի խոստո-
վանանքըն մէնֆաաթը չօգ ալը...

— Պէն տէ պաշաաթըն էօյլէ օլտուղունա
ինանմայա:

— Էմին օլունը քի էյէր հէր քէս խոս-
տովանանքա կէլիւլ օլտա, բէք չօգ խըրսըղ-
լար նամուս սահիպի օլաճաղարտը, միւս-
րիֆ էվլատլար իտարէլէրինի պիլէճէք, սախ-
թէքհարլարըն, ճանիլէրին վէ դայըր սատըզ
ղէվէլէրին ստէտի բէք աղալաճաղտը...
չունքի պու կիպիլէր խոստովանանքա կէլ-
մէզլէր:

Բէյիս պիր թէպէսսիւմէ:

— Էյի եարմայօրլար տէր:

Վարդապետ գըյամ իտէր վէ քէմալը նէ-
զաքէթլէ չէքէլի կիտէր:

*
**

Մէմուր եալընըզ գալտըղընտա, ուղուն
միւտտէթ միւճիգէ հալինտէ էլինէ կէշմիշ
օլան պին ֆրանքըք պանքնօթա պազըլօրտը:

Մայէթի իլէ արալարընսա ճէրէհան իթ-
միշ օլան միւճիգէյի տէր խաթըր իտիօր, վէ
վիճտանէն դայէթ մուաղղապ օլուօրտը: Նի-
հայէթ ուլուեաճաղը վազըթ շու նէթիճէյէ
վարմըշ ալը քի:

— Խոստովանանք հէր հալտէ Այլահանի
օլմալը տըր, եօգսա հիշ պիր մանա վէրէմէմ:
մէսէլա օնտա կէօղէ չարբար սուրէթաէ ին-
սանի պիր ճիհէթ վար իտէ, օ տա քէնտի
քէնտիսինի իսլահ իթմէք Կօրվուսը ալը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀՈՌՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ.— Պիոս Ժ.
Սըրազան Քաջանյայպետը Մօթու բուօրնիօ գրու-
թեամբ մը մանաւօր կերպով Իտալիոյ և յարակից
կղզիներուն կղերականաց կը յանձնարարէ որ Ասա-
ուաճաթանութեան, և իմաստասիրութեան մանաւանդ
բնականցական իմաստասիրութեան ուսմանց մէջ եր-
բէք չնդին հիմնական սկզբունքներէն Սուրբ Թովմաս
Ափունացւոյն օր միւս բոլոր վարդապետներէն ա-
ւելի լուսաւորեց Եկեղեցին, և որուն գիրքերէն մէկ
տարուան մէջ մարդ աւելի օգուտ կը քաղէ քան

միւսներուն վարդապետութիւններէն իր սմբողջ
կեանքին մէջ:

*. Յունիս 29ին Ս. Քաջանյայպետը օրհնեց
10,000ի չափ հաւատացեալներ, որ խմբուած էին
Սուրբ-Գամատոսի բակին մէջ: Աւստրիոյ տան սու-
գին հակառակ՝ կարելի չէր եղած յետաձգել ընդու-
նելութիւնը որով հրաւերը կանխաւ տրուած էր:

Սըրազան Քաջանյայպետը՝ Ժամը 3 ու կէսին
կեդրոնական պատշգամբ երեւցաւ և ուխտաւորնե-
րուն ծափերուն և ուրախութեան արտայայտու-
թեանց պատասխանեց ձեռամբաձի ողջունելով զա-
նոնք: Քաջանյայպետական պահակազօրքին նուա-
զախու՛մբը՝ Ասուած կ'ուզեմք երգին եղանակը հնչե-
ցուց, և ներկաները նոյնին խօսքերը երգեցին միաբե-
րան: Պիոս Ժ. կորովի ձայնով քաջանյայպետական
օրհնութիւնը տուաւ: Ապա բազմութիւնը գնաց Ս.
Պետրոսի ուր աւելի ևս ստուարացաւ՝ գլխաւոր Ա-
ռաքելոց տօնին առթիւ եկող հոմալեցիներէն:

Պիոս Ժ. իր առանձնական ունկնդրութիւնները
գաղթեցուց ի նշան ոգոյ, Սերայօվոյի դաւին առ-
թիւ:

ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ.— Հո-
գեւոր իշխանութեան կողմէ հետեւեալը զրկուեցաւ.
Միջագիւղի եկեղեցւոյն Մեծ.— Ժողովրդապետ Գեղյ,
Բարսեղ Ծ. Վ. Զատայեանի:

Թիւ 7336

Կ. Պոլիս, 15 Յուլիս 1914

Գեղարգելի՛ Տէր,

Ծանօթ դէպքին համար Միջագիւղի մեր Ս.
Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին կանոնական Արգելքի
տակ առած էինք՝ ըստ տրամադրութեան իրաւանց
Սուրբ Եկեղեցւոյ: Եւ որովհետեւ այս պատիժը բու-
ժողական և առժամանակեայ էր, նկատի առնելով
այն բարի աղբեցութիւնը զոր կը նշմարենք հաւա-
տացելոց վրայ՝ դատապարտելու համար նոյն դէպ-
քին նման ապօրինաւոր և սրբապիղծ արարքները, և
ևս զիջանելով խնդրանաց բարեպաշտ ժողովրդեան,
որոշեցինք նոյն եկեղեցիէն վերցնել, ինչպէս այս
պաշտօնական գրութեամբս կը վերցնենք յիշեալ ար-
գելքը: Ուստի ըստ այսմ գործեցէք և ծանուցէք ա-
մենուն:

*. Յունիս 14ին, Յրանայի աղգային տօնին
առթիւ, Արհի. Յովսէփ արքեպիսկոպոս Ռոքոսեան
կ. Պատր. փոխանորդը, ընկերակցութեամբ Կաթողի-
կոսարանի քարտուղարներէն Գեղ. Յակոբ Վ. Մա-
ղարեանի ֆրանսական գեսպանին այցելութիւն տուաւ
և Ամեն. Հոգեւոր Տէրոջ շնորհաւորութիւններն ու
բարեմաղթութիւնները մատոյց Ն. Վսեմ. Տէրու-
թեան Դեսպանը զգածեալ շնորով շնորհակալութիւն
յայտնեց և յանձնարարեց իր յարգանքները հաղոր-
դել Ն. Ամեն. Տէրութեան:

Ֆ. Յուլիս 12ին, Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյն մէջ պատարագ մատուցուեցաւ և յետոյ հանգրտեան պաշտօն կատարուեցաւ Աւստրիոյ-Հունգարիայ ողբացեալ գահաժառանգ ամուսին հոգւոյն համար:

Ֆ. Յուլիս 14ին Պայիս հաստն Գեր. Գեր. Սահակ Վ. Մատոյեան և Սարգիս Վ. Խաչատուրեան: Գեր. Սարգիս Վ. Խաչատուրեան, որ Խարբերդի վիճակաւ Արհի. Ստեփան եպիսկոպոս Խաչէլեանի կողմէ Լուրտ կ'երթայ Ս. Հ. Համաժողովին մասնակցելու, յաջորդ օրը Յուլիս 12ին մեկնեցաւ:

Ֆ. Դպրոցներու ամսվերջի հանդէսները տեղի ունեցան:

Յուլիս 9ին Արհի. Ռոքոսեան Կ. Պ. փոխանորդը ներկայ եղաւ Ա. Յ. կարգին Մայր Վանատան դպրոցին պարգեւարաշխութեան հանդէսին, որ չլստ Գահացուցիչ կերպով տեղի ունեցաւ: Երեք շրջանաւարտ օրիորդներ վկայական ընդունեցան:

Կրթական տեսչութեան կողմէ եկած էր յատուկ քննիչ պաշտօնեայ մը, որ արտաքոյ կարգի գոհաց աշակերտութեան հինքերուն ցոյց տուած յաջողութեան և չքուող կրթութեան հինքին Մասնաւորապէս հիացմամբ գովեց նոյն հաստատութեան օրիորդաց ձեռագործներուն վրայ տեսած արուեստի նրբութիւնը, զոր այսուր դժուար է գտնել:

Քննիչ պաշտօնեան ուղեկցեց ապա նոյն Կարգին պատկանող որբանոցը, և այն տեղւոյն ձեռագործներն այլ քննեց ուրուհիներուն վիճակին մասին տեղեկութիւն առաւ և շատ գոհ սպասուութեան տակ մեկնեցաւ:

ՆԵՐՔԻՆ ՆԻ ՄԻՋՈՋԳՈՅԻՆ ԳՈՐԾԵՐ. — Երեսփոխանական Ժողովին նստաշրջանը որ Յուլիս 14ին կը լինար, 10 օր երկարաձգւեցաւ կայսերական հրամանաւ:

Ֆ. Երասկոյտին Յուլիս 14ի նիստին մէջ, ծերակուտական Եօրկիստէս Էֆէնտիի դէմ պարտաւ և

հինգ նիստէ վտարուամ քուէարկուեցաւ. որովհետեւ առժամեայ օրէնք մը քննադատած միջոցին կառավարութիւնը նախատեր և բար էր. «Արհիւս օրինագիծ չէ սովորական թուղթ մըն է, զոր պէտք է ոչ թէ մերժել այլ զայնոյթով մէկդի նետել»:

Ֆ. Ալպանիոյ կացութիւնը խառնաշփոթ է, ապստամբները հետզհետէ կ'ուժոգնան: Եպիսկոպի կողմէրը հեղին զօրքեր կը մասնակցին եպիսկոպի ըմբոստներուն:

Ֆ. Աւստրիոյ և Սերպիոյ յարաբերութիւնները ձգտեալ հանգամանք մը կ'առնուին:

Ֆ. Վերջերս Անգլիոյ արաաքին գործոց նախարար Սըր Էտուարտ Կրէյ, Խորհրդարանին մէջ ընդարձակ ճառ մը խօսելով արաաքին քաղաքականութեան վրայ, հետեւեալ յայտարարութիւնը բարձրէ Արեւելեան նահանգներու բարեկարգմանց մասին.

«Այժմ կ'անցնիմ Հայաստանի խնդրին դժուարութիւն մը կայ որոշակի ճշդելու երկու վերահսկիչներուն տրուած մասնաւոր իրաւասութիւնը: Երկու եւրոպացի վերահսկիչները նշանակուեցան թուրք կառավարութեան կողմէ. բայց մեզի պաշտօնապէս չէ հաղորդուած թէ ինչ իրաւասութիւններ տրուած են անոնց: Թուրք կառավարութիւնը ուզած էր երկու անգլիացի վերահսկիչներ և տուած էր անոնց լիազօր իրաւասութիւն բայց չուզեց որ այնպէս կարծուի թէ օտար ճնշման տակ եղաւ այդ, ունէ կերպով շնչսեմացնելու համար թրքական վեհապետութիւնը»:

«Ինչ որ կ'ընամ ըսել, սա է թէ պիտի ունենան վերահսկիչները այն աստիճանի իրաւասութիւն մը, որով կարող ըլլան վերահսկելու դատարաններուն, որովհետեւ թեան և ժանտարմարի վրայ: Իրողութիւնը ոչնէ որ Թուրքերը խիստ որոշ կերպով ըմբռնած են թէ վերահսկիչները պիտի ունենան շատ ընդարձակ իրաւասութիւններ, ինովին բաւարար գործադրել կարենալու համար կառավարական վարչութեանց մէջ այն բարեկարգումները, զորս — ինչպէս ամէնքս ոյ կը յուսանք — Թուրք կառավարութիւնը ինքն իսկ կը փափաքի իրագործուած տեսնել»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դեպքեր եւ սկզբունքներ	449
Յիսուս Քրիստոս	451
Հիմն վաւերաւորութիւն	453
Հաւատոյ մի նոր յայրաճակը	441
Եօրկեակ Քրիստոսներ	457
Վեցօրեայ արարչութիւնը	458
Նախանձելի ճամաւիս դուռ մը	461
Ինսանի՞ մի Եօզսա Ալլահանի՞ մի	461
Տեղեկագրական	463

ԱՐՏՈՆԱՏԵՐ

ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՈՐԵՆ-ԽՄԱԿՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. Վ. ԹԵՐԶԻՊԱՆԱՆ



Տպարան Կ. Արձագանգ Շաքարտետի, Բերա, Պայրամ փողոց քիւ 5, Ե. Պոլիս

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20.— մէկ թիւ՝ 1 դհկ.—Արսասահ-
ման տար. 3ր. 10. վեցամս. 5.— Վճարմունք կանխիկ են:

ՀԱՍՏԷ.— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, 4.

Գոյիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնն պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու ե-
յօղուած: 3.— Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին:
4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոշմ ի միասին զրկել:

Տարր. Սկզբունք Գրիստ. Վարդապետութեան. գին 2 դհկն:
Տէր. Կոմիտաս Գահանային վարըր. գին 5 դհկն:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենալ-
նի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համարս կը տպուին ամեն տե-
սակ ծանուցմանք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, բարդեր, քարդ-տարէաներ,
մահազդներ, եւն. Գրիները անմեղելի կերպով աժան են: Գեղեցկագիտական ճա-
շակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի
մնան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 49.000.000

SIÈGE CENTRAL:

Vienne I. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapesteste, Budweis, Czernowitz, Drohobycz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemyśl, Salzburg, St. Poelten, Stanislaw, Tarnopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau.

EN TURQUIE:

Constantinople et Smyrne.

SUCCURSALE DE CONSTANTINOPLE

Siège à Galata, Place du Pont de Karakeuy
Agences à Stamboul, Péra et Scutari.

Le Wiener Bank-Werein fait toutes opérations de Banque et notamment :

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;

Escompte d'effets de commerce;

Achat et vente de change sur l'Etranger;

Emission de lettres de crédit et ouverture d'acréditifs simples et documentaires;

Paievements télégraphiques en Turquie et à l'Etranger;

Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;

Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;

Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;

Garde de titres, marchandises etc.

Achat de vente de monnaies diverses, matières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3. $\frac{1}{2}$ % d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.